ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 10»

ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ և ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Հեղինակ՝ Լիլիթ Գրիգորյան

2021 թ.

Հայ գրականություն
10-րդ դասարան

Դասի թեման՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, գրերի գյուտը
Տևողությունը՝ 2 դասաժամ
Դասի նպատակը՝
Կվերհիշի՝

.Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի բովանդակությունը,
. Մեսրոպ Մաշտոցի կյանքը և ծավալած գործունեությունը,
. գրերի գյուտի ստեղծման նախապայմանները։

Կկարողանա՝

. Կորյունի երկի հիման վրա ներկայացնել Մաշտոցի կյանքը,
. թվարկել գրերի գյուտի ստեղծման նախապայմանները,
. ներկայացնել և վերլուծել պատմական իրադարձությունները և Մաշտոցի գործունեության նպատակակետը,
. պատմության համատեքստում վերլուծել գրերի գյուտը,
. արժևորել գրերի գյուտը՝ ազգային մշակութային արժեքների պահպանման և հետագա զարգացման կարևոր պայման։

Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, Ա4 չափսի թուղթ, ուսումնական նյութ։
Ուսուցման մեթոդներ՝ «Խթանող հարցեր», «ՓԳՀ /փոխներգործուն գրառումներ», «Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր», ԽԻԿ համակարգ։

Դասի ընթացքը՝

Խթանում

Պարզել նյութի վերաբերյալ սովորողի ունեցած գիտելիքները «Խթանող հարցեր» մեթոդով։
ա/ Ի՞նչ կապ կա Կորյունի և Մեսրոպ Մաշտոցի միջև։

բ/ Ո՞վ է եղել Կորյունը և ինչո՞վ է զբաղվել։
գ/ Որո՞նք էին գրերի գյուտի ստեղծման նախապայմանները։
դ/ Ի՞նչ է նշանակում վարք։
ե/ Ինչպիսի՞ կառուցվածք ունի Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը։

Իմաստի ընկալում

Սովորողներին հանձնարարել ընթերցել այս թեմային վերաբերող նյութը, որը ընդգրկված է 10-րդ դասարանի դասագրքում։
Ահա հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 13-17։
Ընթերցելուց հետո սովորողներին հանձնարարել լրացնել ՓԳՀ /փոխներգործուն գրառումների համակարգ/

Գիտեմ	Չգիտեմ	Իմացածին հակասում է	Անհասկանալի է ?	Հետաքրքիր է, կարելի է քննարկել
V	+	—		

Այս մեթոդը կօգնի սովորողներին վերահսկել սեփական ընկալումը՝ ի հայտ բերելով հաստատված կամ հերքված պատկերացումները։ Աշխատանքն ավարտելուց հետո, եթե կան «անհասկանալի է, հետաքրքիր է, կարելի է քննարկել» գրառումներ, ապա պետք է պարզաբանվեն՝ թեմայի ընկալումը լիարժեք դարձնելու նպատակով։

Կշռադատում

Ընթերցած նյութի շուրջ կազմակերպել զույգերով կամ խմբերով մտքերի փոխանակում, նյութի քննարկում կամ բանավեճ։

Դասի ավարտին իրականացնել **փոխադարձ** գնահատում։

Տնային աշխատանք։

. Գտնել և ներկայացնել այբուբենին վերաբերող հետաքրքիր նյութեր՝ ֆիլմ, երաժշտական ստեղծագործություն։ Օրինակ՝ Հայոց այբուբենը պարի լեզվով՝

https://www.youtube.com/watch?v=3igz-YkepAY

. Պատրաստել սահիկաշար՝ ներկայացնելով պատմական ժամանակաշրջանը և Մաշտոցի գործունեության նպատակակետը, Այբուբենի թվային արժեքը։

. Գրել վերլուծական շարադրանք՝ հիմնավորելով կարծիքդ «Մաշտոցից առաջ գրեր եղել են» թեմայով:

Անդրադարձ

. Ի՞նչ թեմայի շուրջ խոսեցինք:

. Ի՞նչ նոր բան իմացաք:

. Ո՞ր հարցի շուրջ կցանկանայիք քննարկում կատարել:

. Ի՞նչը ձեզ մոտ վատ ստացվեց, որ կարծում եք ավելի լավ կարող էիք անել:

Դասի թեման՝ Հայ պատմագրություն: 5-րդ դարի պատմիչներ

Տևողությունը՝ 2 դասաժամ

Կվերհիշի՝

. գրական ինչ տեսակներով է ձևավորվել հայագիր գրականությունը,

. ինչ է թարգմանական գրականությունը,

. պատմիչների կյանքի և գործունեության հիմնական դրվագները,

. պատմիչների գրած աշխատությունների բովանդակությունը:

Կկարողանա՝

. թվարկել հայագիր գրականության ձևավորման տեսակները,

.ներկայացնել Ոսկեդարի ընդհանուր բնութագիրը,

. ներկայացնել պատմիչների կենսագրությունները և գործունեությունները՝ ըստ փաստերի և հուշագրության,

. մեկնաբանել աշխատությունների մեջ հեղինակների արծարծած խնդիրները,

. բացատրել՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին,

. վերլուծել գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա,

. վերլուծել հայ ինքնուրույն գրականության ձևավորման ժամանակաշրջանը,

. արժևորել հայ գրականության իմացությունը որպես ազգային մշակութային արժեքների գնահատման կարևոր պայման։

Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, Ա4 չափսի թուղթ, ուսումնական նյութ։

Ուսուցման մեթոդներ՝ «Մտագրոհ», «Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր», ԽԻԿ համակարգ։

Դասի ընթացքը՝

Խթանում

Պարզել նյութի վերաբերյալ սովորողի ունեցած գիտելիքները «Մտագրոհ» մեթոդի միջոցով։ Ուսուցիչը գրատախտակին գրում է ***ոսկեդար*** բառը։ Սովորողները սկսում են վերհիշել և թվարկել ***ոսկեդար*** բառի հետ առնչվող բոլոր հասկացությունները, բառերը։ Ուսուցիչը բոլոր մտքերը գրում է գրատախտակին։ Այնուհետև սովորողներին հանձնարարվում է իրենց իսկ թվարկած բառերով սահմանել՝ ***ինչու՞ է 5-րդ դարը կոչվում ոսկեդար։***



Իմաստի ընկալում

Այս փուլում դասարանը բաժանել 5 խմբի և հանձնարարել ընթերցել դասագրքի նյութը հատվածներով՝

Առաջին խումբ՝ «Ոսկեդար, մատենագրություն» հատվածը։

Երկրորդ խումբ՝ « Ագաթանգեղոս» հատվածը։

Երրորդ խումբ՝ «Փավստոս Բուզանդ» հատվածը։

Չորրորդ խումբ՝ «Եղիշե» հատվածը։

Հինգերորդ խումբ՝ «Ղազար Փարպեցի» հատվածը։

Ահա դասագրքի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 18-26։

Հատվածները ընթերցելու ժամանակ սովորողներին հանձնարարվում է կիրառել «Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր» վարժությունը, որն օգնում է մտածել, կշռադատել կարդացած նյութը, վերհիշել նախորդ դասարանում այդ թեմայից անցածը և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել մտքերը։

Կշռադատման փուլ

Այս փուլում յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը։

Առաջին խումբ՝ թվարկում են հայագիր գրականության ձևավորման տեսակները, ներկայացնում են Ոսկեդարի ընդհանուր բնութագիրը։

Երկրորդ խումբ՝ ներկայացնում է Ագաթանգեղոսի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության, մեկնաբանում աշխատության մեջ հեղինակի արծարծած խնդիրները, բացատրում է՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին։

Երրորդ խումբ՝ ներկայացնում է Փավստոս Բուզանդի կենսագրությունը և գործունեությունը ըստ փաստերի և հուշագրության, մեկնաբանում աշխատության մեջ հեղինակի արծարծած խնդիրները, բացատրում է՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին։

Չորրորդ խումբ՝ ներկայացնում է Եղիշեի կենսագրությունը և գործունեությունը ըստ փաստերի և հուշագրության, մեկնաբանում աշխատության մեջ հեղինակի արծարծած խնդիրները, բացատրում է՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին։

Հինգերորդ խումբ՝ ներկայացնում է Ղազար Փարպեցու կենսագրությունը և գործունեությունը ըստ փաստերի և հուշագրության, մեկնաբանում աշխատության մեջ

հեղինակի արծարծած խնդիրները, բացատրում է՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին։

Դասի ավարտին կատարվում է փոխադարձ գնահատում։

Տնային աշխատանք։

. Վերլուծել գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա։

. Գտնել և ներկայացնել որ ստեղծագործությունների համար են աղբյուր դարձել պատմիչների երկերը։

. Գտնել և ներկայացնել արվեստի այն կտավները որոնցում ներկայացված են պատմիչների երկերից հատվածներ։

Անդրադարձ

. Ի՞նչ թեմայի շուրջ խոսեցինք։

. Ի՞նչ նոր բան իմացաք։

. Ի՞նչը կարևորեցիք և արժևորեցիք։

Դասի թեման՝ Մովսես Խորենացու կյանքը, ապրած ժամանակաշրջանը, «Հայոց պատմություն» երկի ընդհանուր բնութագիրը

Տևողությունը՝ 1 դասաժամ

Կվերհիշի՝

. Մովսես Խորենացու կյանքի և գործունեության հիմնական դրվագները,

. ապրած ժամանակաշրջանը և այդտեղ ներկայացված խնդիրները,

. «Հայոց պատմություն» երկի կառուցվածքը, առանձնահատկությունը,

. բովանդակության մեջ արծարծված խնդիրները։

Կկարողանա՝

. ներկայացնել Մովսես Խորենացու կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության,

. կազմել գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի,

. ներկայացնել աշխատության կառուցվածքը, բովանդակությունը,

. մեկնաբանել աշխատության մեջ հեղինակի արծարծած խնդիրները,

. բացատրել՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին,

. համեմատել կերպարներին, նրանց վարքագիծը,

. վերլուծել գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա,

. արժևորել Մովսես Խորենացու կատարած դերը ազգային մշակութային արժեքների պահպանման գործում։

Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, Ա4 չափսի թուղթ, ուսումնական նյութ։

Ուսուցման մեթոդներ՝ «Բազմանիստ», «ԳՈՒՍ», ԽԻԿ համակարգ։

Դասի ընթացքը՝

Խթանում

Ուսուցիչը «Բազմանիստ» է կառուցում ***Խորենացի*** մեկնաբառով. բազմանիստի/ պրիզմայի/ բովանդակությունը պայմանավորված է նրանով, թե ինչ բառեր, գաղափարներ կհայտնեն սովորողները: Վերջիններս ուսուցչի պահանջով սկսում է թվարկել այն բառերն ու արտահայտությունները, որոնք առնչվում են Խորենացի բառի կամ անվան հետ:
Սովորողներին տրվում է երեք րոպե ժամանակ, որպեսզի նրանք կազմեն մեկ նախադասություն՝ իրար կապելով պրիզմայի մեկնաբառը և վերջնաբառը:



«Բազմանիստ» -ի ծավալը կախված է բառի հետ առնչվող բառերի քանակից:

Իմաստի ընկալում

«Հայոց պատմության» գիտական, պատմական, գեղարվեստական արժեքների ուսումնասիրությունն ավագ դպրոցում, հայ գրականության դասընթացի շրջանակներում պահանջում է լուրջ և համակողմանի մոտեցում:

Պատմահոր և «Հայոց պատմությաուն» երկի մասին որոշակի տեղեկություններ աշակերտներն արդեն ստացել են: Այժմ այդ գիտելիքները պետք է խորացվեն և ամբողջական տեսք ստանան հեղինակի կենսագրության և ստեղծագործության համակողմանի ուսումնասիրության միջոցով:

Հաշվի առնելով, որ սովորողներն արդեն որոշակի գիտելիքներ ունեն դասավանդվող նյութի վերաբերյալ, ուսուցիչը դասարանը կբաժանի խմբերի և կհանձնարարի կարդալ դասագրքի նյութը՝ կազմել ԳՈՒՍ աղյուսակ/ ԳՈՒՍ հապավում է, որ նշանակում է Գիտեմ- Ուզում եմ իմանալ- Սովորեցի/: Այս աղյուսակի շնորհիվ նախնառաջ ի մի կբերվեն սովորողի նախնական գիտելիքները/ ի՞նչ գիտենք/, կհստակեցվեն անելիքները/ ի՞նչ ենք ուզում իմանալ/, իսկ թեմայի ուսուցման ավարտին, կամփոփվեն արդեն ստացված նոր գիտելիքները/ ի՞նչ սովորեցինք/:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Ահա դասագրքի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 26-35:

Կշռադատման փուլ

Այս փուլում յուրաքանչյուր խումբ ներկայացնում է թեմայի շուրջ իր աշխատանքը՝ զուգա-հեռներ անցկացնելով այսօրվա իրականության հետ, հիմնավորելով իր տեսակետը օրինակ- ներով: Կատարվում է քննարկում կարծիքների փոխանակում:

Դասի ավարտին կատարել փոխադարձ գնահատում:

Տնային աշխատանք:

. Կարդալ բնագիրը և դուրս գրել այն հատվածները, որտեղ ներկայացվում է գրողի ապրած ժամանակաշրջանը:

. Ապացուցել աշխատության արդիականությունը՝ բերելով օրինակներ:

. Օգտվելով բնագրերից՝ համեմատել՝ ինչպես են գրերի գյուտը նկարագրում Կորյունը և Մովսես Խորենացին:

. Օգտվելով բնագրերից՝ համեմատել՝ ինչպես են նկարագրում գրերի գյուտից հետո սկսված թարգմանակն լուսավորական աշխատանքները Կորյունը և Մովսես Խորենացին:

. Օրինակներով ներկայացնել Խորենացու լեզվի և ոճի առանձնահատկությունները։

Անդրադարձ

. Ի՞նչ թեմայի շուրջ խոսեցինք։

. Ի՞նչ նոր բան իմացաք։

. Ինչը կարևորեցիք։

Դասի թեման՝ Մովսես Խորենացի, Առասպելներ

Տևողությունը՝ 1 դասաժամ

Դասի նպատակը՝

Կվերհիշի՝

. ինչ է առասպելը՝ որպես գրական տեսակ,

. առասպելների բովանդակությունը:

Կկարողանա՝

. վերաշարադրել առասպելների բովանդակությունը,

. ցույց տալ առասպելներում առկա կոնֆլիկտները և հեղինակի առաջարկած լուծումները,

. բացատրել՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին,

. համեմատել կերպարներին, նրանց վարքագիծը,

. վերլուծել գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա,

. արժևորել հեղինակի կատարած դերը ազգային մշակութային արժեքների պահպանման գործում:

Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, Ա4 չափսի թուղթ, ուսումնական նյութ:

Ուսուցման մեթոդներ՝ «Մտագրոհ», «Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր», «Վենի դիագրամ» «Եռաթև աղյուսակ»:

Դասի ընթացք

Խթանում

Պարզել նյութի վերաբերյալ սովորողի ունեցած գիտելիքները «Մտագրոհ» մեթոդի միջոցով: Ուսուցիչը գրատախտակին գրում է ***առասպել*** բառը: Սովորողները սկսում են վերհիշել և թվարկել ***առասպել*** բառի հետ առնչվող բոլոր հասկացությունները, բառերը: Ուսուցիչը բոլոր

մտքերը գրում է գրատախտակին։ Այնուհետև սովորողներին հանձնարարվում է իրենց իսկ թվարկած բառերով սահմանել՝ ***առասպելը։***



Իմաստի ընկալում

Այս փուլում դասարանը բաժանել 5 խմբի և հանձնարարել ընթերցել դասագրքի նյութը հատվածներով՝

Առաջին խումբ՝ «Հայկ և Բել» առասպելը։

Երկրորդ խումբ՝ «Արա Գեղցիկ և Շամիրամ» առասպելը։

Երրորդ խումբ՝ «Տիգրան և Աժդահակ» առասպելը։

Չորրորդ խումբ՝ «Արտաշես և Արտավազդ» առասպելը։

Հինգերորդ խումբ՝ «Վահագնի ծնունդը»։

Ահա դասագրքի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 36-47։

Հատվածները ընթերցելուց հետո սովորողների բաժանել առասպելների բնագրերը և հանձնարարել կիրառել «Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր» մեթոդական հնարը, որն օգնում է մտածել, կշռադատել կարդացած նյութը։ Սովորողները կկարդան բնագրերը և կհամեմատեն դասագրքի նյութի հետ՝ գտնելով նմանություններ և տարբերություններ։

Կշռադատման փուլ

Այս փուլում յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը՝ եռաթև աղյուսակի ձևով։

Դասագրքի հատվածներ տարբերություն	Նմանություն	Բնագրեր տարբերություն

Առաջին խումբ՝ «Հայկ և Բել» առասպելի տարբերությունները և նմանությունները՝ ըստ դասագրքի նյութի և բնագրի։

Երկրորդ խումբ՝ «Արա Գեղցիկ և Շամիրամ» առասպելի տարբերությունները և նմանությունները՝ ըստ դասագրքի նյութի և բնագրի։

Երրորդ խումբ՝ «Տիգրան և Աժդահակ» առասպելի տարբերությունները և նմանությունները՝ ըստ դասագրքի նյութի և բնագրի։

Չորրորդ խումբ՝ «Արտաշես և Արտավազդ» առասպելի տարբերությունները և նմանությունները՝ ըստ դասագրքի նյութի և բնագրի։

Հինգերորդ խումբ՝ «Վահագնի ծնունդը» տարբերությունները և նմանությունները՝ ըստ դասագրքի նյութի և բնագրի։

Երբ խմբերը ներկայացնեն իրենց աշխատանքը կարելի է կատարել փոխադարձ գնահատում։ Խմբերը կգնահատեն միմյանց աշխատանքը՝ հիմնավորելով գնահատած միավորը։

Դասի ավարտին գնահատել խմբերի աշխատանքը։

Տնային աշխատանք։

. Առասպելներում ներկայացված իրադարձությունները համեմատել պատմական նույն դարաշրջանի հետ՝ բերելով օրինակներ։

. Գտնել և ներկայացնել արվեստի այն կտավները որոնցում ներկայացված են առասպելները՝ նշելով կտավների հեղինակներին։

Անդրադարձ

. Ինչի՞ մասին այսօր մենք խոսեցինք։

. Ի՞նչ նոր բան մենք իմացանք։

. Ի՞նչ դաս քաղեցինք այս առասպելներից և ի՞նչ կարևորեցինք։

Ուսումնական նյութեր և առաջադրանքներ

Թեմա 1. Համառոտ ակնարկ հայ գրականության սկզբնավորման վերաբերյալ

Ահա 10-րդ դասարանի դասագրքի նյութի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 4-12: Կարդացե՛ք նյութը և կատարե՛ք առաջադրանքները:

Առաջադրանքներ

1. Ներկայացնել տեքստի հիմնական գաղափարը:

2. Թվարկել գրականության շրջափուլերը՝ներկայացնելով այդ փուլերում ստեղծագործողներին:

3 «Վենի դիագրամ»-ով ներկայացնել բանահյուսության և գրականության հիմնական տարբերությունները:

4. Ներայացնել գրերի գյուտի պատմական հիմքերը և ստեղծման անհրաժեշտությունը:

5. Ըստ ժամանակագրության՝ աղյուսակով ներկայացնել միջնադարի նշանավոր դեմքերն և նրանց ծավալած գործունեությունը։

6. Ներկայացնել գրերի գյուտի ստեղծման ժամանակաշրջանը։

7. Ուսումնասիել և՛ դասանյութը, և՛ տարբեր հավաստի աղբյուրներ՝ ներկայացնելով գրերի գյուտին հաջորդող ժամանակաշրջանը։

8. Ստեղծել սահիկաշար՝ պահպանելով նրան բնորոշ առանձնահատկությունները։

9. Վարել ռադիոհաղորդում՝ ներկայացնելով դասանյութը և պահպանելով նրան բնորոշ առանձնահատկությունները։

Թեմա 2. Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, գրերի գյուտը

Ահա 10-րդ դասարանի դասագրքի նյութի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 13-17:
Կարդացե՛ք Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և կատարե՛ք առաջադրանքները:
Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը հետևյալ հղմամբ կարող եք և՛ կարդալ, և՛ լսել աուդիո տարբերակով: Ահա հղումը՝ https://grqaser.org/am/441/

Առաջադրանքներ

1. Ստեղծագործաբար վերաշարադրե՛ք «Վարք Մաշտոցի» երկի բովանդակությունը՝ կիրառելով հեղինակի օգտագործած արտահայտչամիջոցները:
2. Կարդացե՛ք բնագիրը և դուրս գրե՛ք Մաշտոցին բնութագրող տողերը:
3. Ըստ բնագրի վերլուծել պատմական իրադարձությունները՝ բերելով օրինակներ:
4. Վերլուծե՛ք գրերի գյուտը պատմության համատեքստում:
5. Գնահատե՛ք Մեսրոպ Մաշտոցի ծավալած գործունեությունը որպես ականատես:
6. Կորյունի երկի հիման վրա ներկայացնել Մաշտոցի կյանքը:

7. Համացանցից օգտվելով գտե՛ք «Վարք Մաշտոցի» երկին վերաբերող գեղանկարչական, երաժշտական ստեղծագործություններ:

8. Պատրաստե՛ք տեսադաս կամ սահիկահանդես «Հայոց այբուբենի գաղտնիքները» վերնագրով:

9. Համեմատե՛ք հայկական մշակույթը գրերի գյուտից առաջ և հետո՝ ներկայացնելով օրինակներ:

10. Համացանցում որոնել և գտնել Մաշտոցի կերպարին անդրադարձած հայ գրողների ստեղծագործություններ և բնութագրել:

11. Տեղեկատվական տարբեր աղբյուրներից գրերի գյուտին նվիրված նյութեր որոնել և ուսումնասիրել:

Թեմա 3. Հայ պատմագրություն: 5-րդ դարի պատմիչներ




Ահա 10-րդ դասարանի դասագրքի նյութի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 18-26:
Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու «Պատմություն» գրերը, ինչպես նաև «Վարդանի և հայոց պատերազմի» աշխատությունը:
Կարդացե՛ք ոսկեդարի պատմիչների աշխատությունները և կատարե՛ք առաջադրանքները:

Առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք պատմիչների կենսագրությունները և գործունեությունները՝ ըստ փաստերի և հուշագրության:
2. Ստեղծագործաբար վերաշարադրե՛ք ոսկեդարի պատմիչների երկի բովանդակությունը՝ կիրառելով հեղինակի օգտագործած արտահայտճամիջոցները:

2. Ըստ բնագրի վերլուծել պատմական իրադարձությունները, հեղինակի արծարծած խնդիրները՝ բերելով օրինակներ։

3. Գնահատե՛ք գրող-քաղաքացու կատարած աշխատանք՝ որպես ինքնաճանաչման և ազգային արժեքների պահպանում՝ բերելով փաստեր։

4. Համացանցից օգտվելով գտե՛ք պատմիչների երկերին վերաբերող գեղանկարչական, երաժշտական ստեղծագործություններ

5. Բնագրից դու՛րս գրեք այն լեզվաոճական միջոցները, որոնցով պատմիչները իրենց պատմությունները դարձրել են ազդեցիկ։

6. Բնագրից դու՛րս գրեք բնապատկերները։

7. Սահիկաշարով ներկայացնել յուրքանչուր պատմիչի աշխատության կառուցվածքը, յուրաքանչյուր գլխում ներկայացված իրողությունները։

8. Համեմատել գեղարվեստական երկում ներկայացված իրադարձությունները և նույն ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները։

9. Ագաթանգեղոսի պատմությունից կարդալ Անակի, Խոսրովի Գրիգոր Լուսավորչի և Տրդատի, Հռիփսիմյանց կույսերի հետ կապված դրվագներից հատվածներ՝ ցույց տալով ստեղծագործության հատկանիշները։

10. Բուզանդի պատմությունից դուրս գրեք այն հատվածները, որտեղ կան Արշակ թագավորի, Վասակ սպարապետի, Մուշեղի, Պապի, Փառանձեմ թագուհու կերպարների բնութագ-րումները։

11. Թվարկել Բուզանդի պատմության կերպարներից որոնք են հանդես գալիս ուրիշ պատմական վեպերում։

12. Ընթերցել Եղիշեի մատյանի՝ Ավարայրի նկարագրությունը և Հայոց աշխարհի փափկասուն տիկիններին նվիրված հատվածը՝ պատմագրի ոճի հատկանիշները։

13. Եղիշեի մատյանի ներածությունից գտնել և դուրս գրել այն հատվածը, որտեղ Եղիշեն գնահատում է երկի նշանակությունը։

14. Փարպեցու գրքից կարդալ Արարատ գավառի նկարագրությունը և ցույց տալ, թե ինչպես է դրսևորվում հեղինակի հայրենասիրությունը։

Թեմա 4. Մովսես Խորենացու կյանքը, ապրած ժամանակաշրջանը, «Հայոց պատմություն» երկի ընդհանուր բնութագիրը

Կարդացե՛ք Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն» թեմաներին վերաբերող նյութը դասագրքից:

10-րդ դասարանի դասագրքի նյութի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 27-35:

Կարդացե՛ք Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը, ահա գրքի հղումը՝ http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/01/Movses-Khorenaci.pdf կամ ունկդրեք գրքի աուդիո տարբերակները և կատարեք առաջադրանքները:

Ահա աուդիո տարբերակների հղումները՝ ըստ մասերի՝

«Հայոց պատմություն» 1-ին մաս՝ https://www.youtube.com/watch?v=ombDNsX3jJQ

«Հայոց պատմություն» 2-րդ մաս՝ https://www.youtube.com/watch?v=WMG7Wyrr0Tc

«Հայոց պատմություն» 3-րդ մաս՝ https://www.youtube.com/watch?v=KzQLpiSS2fY

«Հայոց պատմություն» 4-րդ մաս՝ https://www.youtube.com/watch?v=Wv_thpTxytY

Կարող եք դիտել Խորենացու մասին հետաքրքիր տեսանյութ. ահա հղումը՝ https://www.youtube.com/watch?v=zd-p8TH7cIA

Առաջադրանքներ

1. Կազմել գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի։

2. Սահիկաշարով ներկայացնել աշխատության կառուցվածքը՝ գրելով յուրաքանչյուր հատվածի մեջ հեղինակի արծարծած խնդիրները։

3. Ներկայացնել Մովսես Խորենացու կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության։

4.Մեկնաբանել՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին՝ բերելով օրինակներ։

5. «Վենի դիագրամ»-ով ներկայացնել կերպարների համեմատական բնութագիրը։

6. Վերլուծել գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա՝ բերելով օրինակներ,

7. Վերլուծել և ներկայացնել՝ ինչո՞վ է Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» տարբերվում մյուս պատմիչների երկերից՝ օրինակով ցույց տալ տարբերությունները։

8. Գտնել և ներկայացնել հայ գրողներից ովքե՞ր են իրենց գրական երկերի նյութը քաղել Խորենացուց։

9. Կարդալ բնագիրը և դուրս գրել այն հատվածները, որտեղ ներկայացվում է գրողի ապրած ժամանակաշրջանը։

10. Ապացուցել աշխատության արդիականությունը՝ բերելով օրինակներ։

11. Օգտվելով բնագրերից՝ համեմատել ՝ ինչպես են գրերի գյուտը նկարագրում Կորյունը և Մովսես Խորենացին։

12. Օգտվելով բնագրերից՝ համեմատել՝ ինչպես են նկարագրում գրերի գյուտից հետո սկսված թարգմանական լուսավորական աշխատանքները Կորյունը և Մովսես Խորենացին։

13. Օրինակներով ներկայացնել Խորենացու լեզվի և ոճի առանձնահատկությունները։

14. Ստեղծել հաղորդում «Զրույց Մովսես Խորենացու հետ» թեմայով՝ պահպանելով հարցազրույցի կանոնները և կառուցվածքը։

15. Խորենացու պատմագիտական հայացքների մասին գիտական ոճով շարադրանք գրել։

16. Խորենացու պատմությունից կարդալ այն հատվածները, որտեղ նկարագրվում են Երվանդակերտ քաղաքը և Զիրավի ճակատամարտը և ցույց տալ, թե ինչ միջոցներով է պատմիչը հասնում խոսքի պատկերավորությանը։

17. Խորենացու պատմությունից դուրս գրել ասույթներ։

Դասի թեման 5. Մովսես Խորենացի, Առասպել



Կարդացե՛ք Մովսես Խորենացու առասպելների մասին նյութը դասագրքից:
10-րդ դասարանի դասագրքի նյութի հղումը՝ https://fliphtml5.com/fumf/qafu, էջ 36-35:
Կարդացե՛ք Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունից առասպելները, ահա գրքի հղումը՝ http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/01/Movses-Khorenaci.pdf և կատարեք առաջադրանքները:

Առաջադրանքներ

1. Վերլուծել առասպելներում առկա կոնֆլիկտները և հեղինակի առաջարկած լուծումները՝ բերելով օրինակներ,
2. Բացատրել՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին՝ հիմնավորելով օրինակներով:

3. «Վենի դիագրամ»-ով ներկայացնել կերպարների համեմատական բնութագիրը, նրանց վարքագիծը։
4. Վերլուծել գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա՝ ներկայացնել բնագրային օրինակներ։
5. Արժևորել հեղինակի կատարած դերը ազգային մշակութային արժեքների պահպանման գործում՝ օրինակներով հիմնավորելով մեկնաբանությունը։
6. Առասպելներում ներկայացված իրադարձությունները համեմատել պատմական նույն դարաշրջանի հետ՝ բերելով օրինակներ։
7. Գտնել և ներկայացնել արվեստի այն կտավները որոնցում ներկայացված են առասպելները՝ նշելով կտավների հեղինակներին։
8. Թվարկել՝ ում միջոցով են առասպելները հասել մեզ։